ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սմարթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային
կազմակերպություն սահմանափակ
պատասխանատվությամբ
Ընկերության մասնակից
«Հայասա Ինվեսթմենթս» ՍՊ ընկերության
(հանդիսանում է «Հայասա Ինվեսթմենթս» ՍՊ
ընկերության
«Ապրիկո» փակ ոչ հրապարակային
պայմանագրային ներդրումային
ֆոնդի կառավարիչը, հանդես է գալիս այդ
ֆոնդի անունից
և այդ ֆոնդի ակտիվների հաշվին)
07 նոյեմբերի 2018 թվականի թիվ 1 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.01.22 13:48:13 AMT
Reason: Գրանցած է 17.01.2024թ.

Փոփոխված է՝
Մասնակիցների արտահերթ ժողովի 01.07.2019 թվականի
թիվ 3 արձանագրությամբ
Մասնակիցների արտահերթ ժողովի 26.04.2021 թվականի
արձանագրությամբ
Մասնակիցների արտահերթ ժողովի 15.07.2022 թվականի
թիվ 01/22 արձանագրությամբ
Մասնակիցների արտահերթ ժողովի 20.10.2022 թվականի
թիվ 02/22 արձանագրությամբ
Մասնակիցների արտահերթ ժողովի 29.12.2023 թվականի
թիվ 29/12/23 արձանագրությամբ

«Սմարթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային
կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության 29.12.2023 թվականի արտահերթ ժողովի նախագահ՝

Գոհար Գևորգի Բաղդասարյան

Nshan Meliksetyan

Digitally signed by
Nshan Meliksetyan
Date: 2024.01.17
12:25:44 +04'00'

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՄԱՐԹ ԿՐԵԴԻՏ»
ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
(նոր խմբագրություն)

Երևան 2023թ.

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ,
2. Ընկերության գործունեությունը եվ ֆինանսական գործառույթները,
3. Ընկերության կանոնադրական կապիտալը,
4. Ընկերության հիմնադիրները եվ մասնակիցները,
5. Ընկերության կառավարման մարմինները,
6. Ընկերության գործադիր մարմինները,
7. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը),
8. Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողությունը,
9. Ընկերության աուդիտային ստուգումը,
10. Ընկերության գործունեության դադարեցումը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Սմարթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) վարկային ընկերության գործունեության իրականացման միջոցով շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված բաժնեմասերի: Ընկերության մասնակիցը պատասխանատու չի ընկերության պարտավորությունների համար և իր ներդրման արժեքի սահմաններում կրում է ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Կազմակերպությունը համարվում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն Կանոնադրությամբ սահմանված քանակությամբ բաժնեմասերի:

1.3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով, այլ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:

1.4. Ընկերության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթը սույն Կանոնադրությունն է, որի պահանջների կատարումը պարտադիր է Ընկերության հիմնադրի (մասնակցի), Խորհրդի, գործադիր մարմնի, կառուցվածքային ու տարածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների և բոլոր աշխատակիցների համար:

1.5. Ընկերության իրավունակությունը ծագում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու պահից և դադարում՝ լուծարման վերաբերյալ պետական գրանցամատյանում գրառման պահից:

1.6. Կազմակերպությունը՝ որպես իրավաբանական անձ, օժտված է օրենսդրությամբ իրավաբանական անձին տրված բոլոր իրավասություններով:

1.7. Ընկերության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը պատկանում է Ընկերությանը՝ սեփականության իրավունքով:

1.8. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.9. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ, խորհրդանիշով, հարկային ծածկագրով և ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր:

1.10. Ընկերության գործունեության ժամկետն անսահմանափակ է:

1.11. Կազմակերպությունը կրում է օրենսդրությամբ Ընկերությանը վերապահված իրավունքներ և պարտականություններ, անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է սահմանված:

1.12. Ընկերության լրիվ և կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «Սմարթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
կրճատ՝ «Սմարթ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ,
անգլերեն՝ “Smart Credit” Universal Credit Organization Limited Liability Company,
կրճատ՝ “Smart Credit” UCO LLC,
ռուսերեն՝ “Смарт Кредит” универсальная кредитная организация общество с ограниченной ответственностью,
կրճատ՝ “Смарт Кредит” УКО ООО:
Ընկերության գտնվելու վայրն է (հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հրաչյա Քոչար փողոց 27 շենք, 55 ոչ բնակելի տարածք:
1.13. Ընկերության մասնակիցներ են հանդիսանում «Կրեդո Յունիոն» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համար՝ 264.120.1321419, ՀՎՀՀ՝ 08257168, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պող. 24ա) և «Հայասա Ինվեսթմենթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (պետական գրանցման համար՝ 273.110.1036034, ՀՎՀՀ՝ 02682595, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 2-րդ շ., բն. 18): «Կրեդո Յունիոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերության բաժնեմասերի 80 տոկոսը՝ 1600 բաժնեմաս, «Հայասա Ինվեսթմենթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 20 տոկոսը՝ 400 բաժնեմաս:
1.14. Կազմակերպությունն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է վարկային ընկերության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իր մեջ ներառում է փոխառությունների ներգրավում և (կամ) գործարքների կնքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային ընկերության համար, սակայն կապված չեն վարկային ընկերության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ և (կամ) վարկերի տրամադրումը կամ սույն օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարումը:
2.2 Կազմակերպությունն, որպես ֆինանսական գործառույթ իրականացնող մարմին իրավունք ունի՝

- իրականացնելու ունիվերսալ վարկային ընկերության գործունեություն՝ Կենտրոնական բանկի կողմից վարկային ընկերության լիցենզիա ստանալու օրվանից:
- տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ինչպես նաև ՀՀ օրենքով չարգելված եղանակով ներգրավել փոխառություններ իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, տրամադրել երաշխիքներ,
- թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ

գործառնություններ,

- մատուցել վարկային ընկերության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),
- գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ,
- գնել և վաճառել արտարժույթ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, եթե դա անհրաժեշտ է Կազմակերպության կողմից տրամադրված վարկային գործիքների սպասարկման համար և չի դրանով խախտվում ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները,
- Կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
- մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
- ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
- Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:
- օգտվել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ և Հայաստանի Հանրապետության լիազորված պետական մարմիններ, հրապարակել ֆինանսական հաշվետվությունները,

բ) աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

գ) պատասխանատվություն կրել և հատուցել իր կողմից պատճառված վնասը՝ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքները խախտելու համար,

դ) ապահովել Ընկերության փաստաթղթերի (կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ներքին իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

ե) կրել օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 214,000,000 (երկու հարյուր

տասնչորս միլիոն) ՀՀ դրամ, որը բաղկացած է 107,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 2,000 բաժնեմասից:

3.2 Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը լրիվ տեղաբաշխված են, վճարված են և պատկանում են Ընկերության մասնակիցներին:

3.3 Կազմակերպությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալը և իր մասնակիցների քանակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3.4 Կազմակերպությունը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնեմասերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնեմասեր տեղաբաշխելու միջոցով:

3.5 Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

3.6 Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.7 Կանոնադրական կապիտալում ներդրումները կարող են կատարվել բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով:

3.8 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել՝

- Ընկերության գույքի (չբաշխված շահույթի) հաշվին,
- Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին,

3.9 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

3.10 Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափը:

3.11 Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է իրականացվել Ընկերության բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:

3.12 Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Ընկերության մասնակիցներն են սույն Կանոնադրության 1.13 կետում նշված անձինք: Ընկերությունը կարող է նոր Մասնակիցներ ներգրավել համապատասխանաբար կանոնադրական կապիտալի ավելացման և բաժնեմասեր թողարկելու և դրանք բաշխելու ճանապարհով:

4.2 Մասնակիցները կարող են փոփոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

4.3 Ընկերության Մասնակիցն իրավունք ունի՝

- սույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը,
- ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ,
- ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը,
- օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց,
- ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով,
- անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից,
- ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից:

4.4 Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, սույն կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

4.5 Ընկերության Հիմնադիրը (մասնակիցը) պարտավոր է՝

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- ենթարկվել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

4.6 Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է Ընկերությանը:

Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում վճարան մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը,
- բաժնեմասի կամ գույքի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջան հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,
- Մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ:

4.7 Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ հասատատվում է ընկերությունում ներդրում կատարելու ցանկություն հայտնած անձի և/կամ մասնակիցների կողմից ընկերության կանոնադրական կապիտալի մեծացման նպատակով ավանդներ ներդնելու համաձայնագրի ձևը, դրանում պարունակող էական պայմանները, ներդրում կատարելու ժամկետները, ավանդի չափը, համաձայնագրի պայմանների խախտման դեպքում տույժեր կիրառելու ձևերը և չափերը:

4.8 Այն մասնակիցը, որը սույն կանոնադրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում, կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելու, կարող է հեռացվել ընկերությունից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.9 Եթե գործունեության ընթացքում որևէ պահի Ընկերությունն ունենում է միայն մեկ մասնակից, ապա Ընկերությունում ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի

կապակցությամբ որոշումներն ընդունվում են ընկերության միակ մասնակցի կողմից, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը:

4.10 Ընկերությունը տարեկան մեկ անգամ իրականացնում է իր շահույթի բաշխում ընկերության մասնակիցների կամ մասնակցի միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից կամ միակ մասնակցի որոշմամբ:

4.11 Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է ընկերության մասնակիցների կամ միակ մասնակցի միջև՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1 Ընկերության կառավարման մարմիններն են՝

ա) Ընդհանուր ժողովը,

բ) Խորհուրդը,

5.2 **Ընդհանուր ժողովը**

5.2.1 Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

5.2.2 Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել հերթական ժողով Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

5.2.3 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

5.2.4 Ընկերության մասնակիցները իրավասու են մասնակցել Ընդհանուր ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն համապատասխան լիազորագիր:

5.2.5 Ընդհանուր ժողովի նախապատրաստման, անցկացման, վարման կարգերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ:

5.2.6 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

- ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,
- ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարումը, ինչպես նաև խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
- ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորությունները առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) պատվիրակելու հարցերը,
- վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը,
- Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվեկշիռների հաստատումը.
- ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,

- ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,
- ընկերության արտաքին աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
- ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը,
- լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը,
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարք), եթե խոշոր գործարքի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության զուտ ակտիվների 50 տոկոսը և ավելին: Խոշոր գործարքները ընդունվում են՝ ընդհանուր ժողովի կողմից դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ¾-ով, իսկ այն դեպքում, երբ ընկերությունն ունի մեկ մասնակից, ապա միակ մասնակցի որոշմամբ:
- օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

5.2.7 Կանոնադրության 5.2.6 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին, Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

5.2.8 Ընդհանուր Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության մասնակիցները (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնեմասերի 50 (հիսուն)-ից ավելի տոկոսին:

5.2.9 Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 3/4 (երեք/չորրորդ) մեծամասնությամբ, եթե օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

5.2.10 Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

5.3 **Խորհուրդը**

5.3.1 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասության սահմաններում և կարող է լուծել ցանկացած հարց, որը չի հանդիսանում Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությունը:

5.3.2 Խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնց լիազորությունների տևողությունը սահմանափակված չէ: Խորհրդի անդամները նշանակվում և ազատվում են Ընդհանուր Ժողովի կողմից: Խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը:

5.3.3 Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»

ՀՀ օրենքով: Խորհուրդը կարող է ընդունել որոշումներ նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

5.3.4 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը,
- Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,
- Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.
- Ընկերության բաժնեմասերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- Ընկերության բաժնեմասերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, նրանց կանոնադրությունների հաստատումը,
- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը,
- Ընկերության վարկային գործիքների տեսակների սահմանումը և դրանց պայմանների, եղանակների, ժամկետների և սակագների առավելագույն և նվազագույն սահմանները,
- Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- Ընկերության վերստուգող հանձնաժողովի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:
- պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- Ընկերության Գործադիր տնօրենի, նրա տեղակալի և գլխավոր հաշվապահի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների սահմանումը,
- Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը և ընդունումը,
- այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
- ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- Ընկերության գործառույթների կատարման ընթացակարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների, ուղեցույցների և ներքին այլ իրավական ակտերի հաստատումը,
- Ընկերության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների

աշխատանաքային կանոնակարգերի, աշխատանքային ծրագրերի հաստատումը, դրանց վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը,

- Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացման ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների, ռիսկերի սահմանաչափերի սահմանումը,
- Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարք), եթե խոշոր գործարքի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու որոշման ընդունման օրվա դրույթամբ Ընկերության զուտ ակտիվների 10 մինչև 50 տոկոսը,
- օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը
- Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Վերստուգողի, Գործադիր տնօրենի (տնօրինության) և Գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

5.3.5 Կանոնադրության 5.3.4 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

5.3.6 Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3 (երկու/երրորդ)-ը:

5.3.7 Խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3 (երկու/երրորդ) մեծամասնությամբ, եթե տվյալ որոշման կայացման համար օրենքով ավելի մեծ չափ նախատեսված չէ:

5.3.8 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

5.3.9 Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

5.3.10 Խորհրդի իրավասությանը և գործունեությանը վերաբերող և Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Ընկերության խորհրդի կանոնադրությամբ:

5.3.11 Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

5.3.12 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները

խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:
5.3.13 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:
5.3.14 Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի, Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

6.2 **Գործադիր տնօրենի գործառույթները**

6.2.1 Գործադիր տնօրենը՝

- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- գործում է առանց լիազորագրի,
- տալիս է լիազորագրեր,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- սահմանում է Ընկերության կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները, խորհրդի կողմից ընդունված միջակայքում,
- հաստատում է Ընկերության աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,
- քննարկում և որոշումներ է ընդունում կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,
- քննարկում և որոշումներ է ընդունում Ընկերության գույքի օտարման գործարքների վերաբերյալ: Գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարք), եթե գործարքի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու որոշման ընդունման օրվա դրույթամբ Ընկերության կանոնադրական կապիտալի մինչև 10 տոկոս,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, ընդունում որոշումներ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը,
- Ընկերության խորհրդի համաձայնեցմանը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ներքին իրավական ակտերի նախագծերը,
- Որոշումներ է ընդունում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և

պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ,

- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

6.2.2 Ընկերության Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

6.2.3 Ընկերության Գործադիր տնօրենի տեղակալը (տեղակալները) պատասխանատվություն է (են) կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն (իրենց) վերապահված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև իրականացնում է (են) Ընկերության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացումը:

6.2.4 Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

6.2.5 Գործադիր տնօրենը կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

6.3 **Գլխավոր հաշվապահի գործառույթները**

6.3.1 Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

6.3.2 Ընկերության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ և «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

6.3.3 Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Գործադիր տնօրենին կամ այլ անձի:

6.3.4 Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտացոլելու, ինչպես նաև Ընկերության Ժողովին, Խորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Ընկերության մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկություններ արտացոլելու համար:

6.3.5 Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատողների համար:

6.3.6 Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Ընկերության Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը:

6.3.7 Ընկերության գլխավոր հաշվապահը պետք է ունենա այդ պաշտոնում աշխատելու համար Կենտրոնական բանկի կողմից տրված որակավորման վկայական:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ)

7.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու

համար Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը նշանակում է Վերստուգող:
7.2 Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված՝ Վերստուգողի կանոնակարգով:
7.3 Վերստուգողը ՀՀ օրենսդրության համաձայն՝
ա) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.
բ) հսկողություն է իրականացնում բանկի գործադիր տնօրենի (տնօրինության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին ակտերի, գործադիր տնօրենին (տնօրինությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.
գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Ընկերության Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
7.4 Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնեմասերի առնվազն 10 (տաս) տոկոսի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով:
7.5 Վերստուգողի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
7.6 Վերստուգողը հաշվետու է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին:
7.7 Վերստուգողի վարձատրության և/կամ ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է օրենքով և իր կողմից սահմանած կարգով:
8.2 Կենտրոնական բանկը Ընկերության ստուգումներն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով, դեպքերում և կարգով:
8.3 Կենտրոնական բանկն իրականացնում է նաև Ընկերության գործունեության ամենօրյա հեռակա վերահսկողություն՝ Ընկերության կողմից օրենքով, Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

9.1 Յուրաքանչյուր տարի Ընկերության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական ընկերության

կողմից, որին նշանակում է Ընկերության Ընդհանուր ժողովը:
9.2 Անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը Կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10.1 Ընկերության գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
10.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել նրա լիցենզիան անվավեր ճանաչելու, ուժը կորցրած ճանաչելու, «Բանկերի և վարկային վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ հիմքերով:
10.3 Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Ընկերության լուծարման մասին, եթե Կազմակերպությունն ի վիճակի է բավարարելու իր պարտատերերի պահանջները: